

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2016 թ.

N 743-Ն

Բ. Ստեփանակերտ

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՆԱՓԱՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԱՏԵՂԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 6-րդ հոդվածի «գ» կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ն ք ն Ե ու մ է**.

1. Հաստատել 2017 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը ըստ ծառատեսակների՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Երջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը՝ պահանջարկի դեպքում թույլատրել սույն որոշմամբ հաստատված ծավալները 2018 թվականի հաշվարկային հատատեղի հաշվին գործափայտի մասով ավելացնել մինչև 15 տոկոսի չափով, վառելափայտի մասով՝ 20 տոկոսի չափով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կառավարության
 2016 թվականի նոյեմբերի 24-ի
 N 743-Ն որոշման

2017 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը

(ամբողջ ծավալը ցույց է տրված խտացված խորանարդ մետրերով)

| Հ/Հ | Հատման տեսակը | Ընդհանուր ծավալը | Այդ թվում՝ գործափայտ | | | | | | | Այդ թվում՝ վառելափայտ |
|-----|-----------------------------|---------------------|----------------------|-------------------|--------------|------------|------------|--------------|---------------|--------------------------|
| | | | Ընդհանուր ծավալը | Ըստ ծառատեսակների | | | | | | |
| | | | | Կաղնի | Հաճախենի | Հացենի | Լորենի | Բոխի | Թխկի, Թեղի | |
| 1 | Անտառվերականգնման հատում | 39 850 | 9850 | 2000 | 4100 | 200 | 500 | 3000 | 50 | 30000 |
| 2 | Խնամփի հատում | 70 650 | 650 | 150 | 100 | | | 400 | | 70000 |
| 3 | Սանիտարական հատում | 50 650 | 650 | 150 | 300 | 50 | 100 | 50 | | 50000 |
| | Ընդամենը | 161150 | 11 150 | 2 300 | 4 500 | 250 | 600 | 3 450 | 50 | 150 000 |

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ